
ՀԱՆԳԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅՈՒ “ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ”
ԵՐԿՈՒՄ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԱՆՈՒՇ ԱՊՐԵՍՅԱՆ

Պոեզիան միշտ չէ, որ հանգավոր է եղել: Ինչպես անտիկ գրականության մեջ, այնպես էլ հնագույն էպոսներում հանգի չենք հանդիպում: Այն ավելի ուշ շրջանի երևույթ է՝ առաջացած միջին դարերում: Այդ շրջանում ավելի կարևոր տեղ է գրավել ներքին ռիթմն ու խոսքի գեղեցիկ մատուցումը: Հայ հին բանահյուսության մեջ հանդիպում ենք դրա վառ օրինակի՝

*Երկներ երկին, երկներ երկիր,
Երկներ եւ ծովն ծիրանի.
Երկն ի ծովուն ուներ եւ զկարմրիկն եղեգնիկ...²*

Հանգը ուտանավորի մեջ տողերի համահնչյուն վերջավորությունն է, որը կրկնվում է երկու կամ ավելի անգամ¹: Միջնադարում արդեն հանգը ոչ միայն երանգավորում էր խոսքը՝ դառնալով որևէ տրամադրության, հույզի, ապրումի արտահայտիչ, այլև այն բովանդակային դեր էր կատարում: Դրանով հեղինակն ընթերցողի ուշադրությունն էր կենտրոնացնում հատուկ հատվածների, մտքերի և բառերի վրա:

Գրիգոր Նարեկացին հանճարեղ բանաստեղծ էր, և նրա “Մատեանում” հանդիպում ենք ամենաբազմազան հանգերի կիրառության, որոնց միջոցով հեղինակը բարձրացրել է խոսքի հուզականությունը, ինչպես նաև ընթերցողին ասելիք ու գաղափար է ուղղել և հասել է դրա ընկալմանը: Ինչպես նկատել է Ա. Ղազինյանը, “... թեև Նարեկացու ստեղծագործությունն ընդհանրապես ունի խառն ու ազատ տողերի համակարգ, իսկ հանգի զարգացումն ավելի շուտ կապված է կանոնավոր տողակարգ ունեցող ուտանավորի հետ, այնուհանդերձ, հեղինակի հանգավորման արվեստն առանձնանում է բարձր վարպետությամբ”⁴:

¹ Է. Ջրբաջյան. Գրականության տեսություն, Երևան, 1972, էջ 319:

² Մատենագիրք հայոց, հ. Բ, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 1830:

³ Է. Ջրբաջյան. նշվ. աշխ., էջ 318:

⁴ Ա. Ղազինյան. Գրիգոր Նարեկացի, Բանաստեղծական արուեստը, Անթիլիաս-Լիբանան, 1995, էջ 230:

“Մատեանի” ամենատիօմիկ, երաժշտական հաստիքը ԻԶ գլուխն է, որի 21–84-րդ – տողերը, որոնք հեղինակը տուն է անվանել, ավարտվում են նույն ՚ի հանգով: Նարեկացին այս հանգին կամ, ինչպես “Մատեանի” ձեռագրերից մեկի գրիչն է նշում, “... – յաղագս լալական եղանակին”⁵ է դիմել ՚իտոքն ավելի ողբագին դարձնելու համար: Ի հանգին դիմելու նպատակի մասին Նարեկացին նշել է “Մատեանում”.

Ի նոյն գիր բերեալ զաւարտմունս տանցն,
Որովք առաւել սաստիկ մորմոքեալ ճւլեցուցանեն⁶:

Միջնադարյան լուծումներից մեկի հեղինակը նույնպես գրել է, որ Նարեկացին “... զամէն տան յետք ի մի գիր աւարտեալ կրկին շուք տայ բանին կարգաց”, քանի որ այդ էր ամենահարմար եղանակը թախիծը նկարագրելու և հոգու տխուր հույզերն առավել սրտառուչ հնչեցնելու.

Կրկին ողորմելի այսու երեւեցեալ,
Որք ի մի գիծ սահմանեալ (345, տ. 17–18):

Նարեկացու համար նույնպես հանգը միայն միջոց չէր ՚իտոքք երանգավորելու համար, այլև հաճախ ձև էր ՚բովանդակային էական հաստիքները տեսանելի դարձնելու: Եվ այստեղ “... չափածո իտոքի ձևական հատկանիշը ներկայացնող հանգի առանձնահատկությունը նա փորձել է բացատրել բանաստեղծության բովանդակության հետ ունեցած կապի մեջ”⁷:

“Մատեանի” աշխարհաբարի նույնիսկ այն թարգմանիչները, որոնք արձակ են թարգմանել (Մ. Գոչունյան, Թ. Գուշակյան, Գ. Եպիսկոպոս Տրապիզոնի)՝ հաճախ չպահպանելով առանձին հատվածների հանգավորումը, ստորև բերված հաստիքները ներկայացրել են՝ հավատարիմ մնալով բնագրային ձևին.

Բազմահատուած էութիւն բնութեանս, ներհակք միմիեանց ի պատերազմի,
Երկչոտութեամբ կարծեաց վարանեալ, ամենայնիւ կայ ի վտանգի (ԻԶ, 346, տ. 72–73):

⁵ Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. 5707, թ. 27բ:

⁶ Գրիգոր Նարեկացի. Մատեան ողբերգութեան, աշխատասիրությամբ՝ Պ. Խաչատրյան և Ա. Ղազինյան, Երևան, 1985, էջ 344 (այսուհետև՝ Գրիգոր Նարեկացի. Մատեան ողբերգութեան): Այս հրատարակությունից տեքստում հղումներ տալիս կնշենք էջը, տողը:

⁷ ՄՄ, 5650, թ. 359բ–360ա:

⁸ Վ. Ներսիսյան. Հայ միջնադարյան տաղերգության ժանրերն ու տաղաչափությունը (X–XVIII դդ.), Երևան, 2008, էջ 117:

*Բնութեանս տարբեր մասերը մղուած են իրարու դէմ պատերազմի.
Երկչոտ կասկածներով շուարած, ենթարկուած է գոյութիւնս
վտանգի⁹:*

*Բարդ էութեանքս տարրերուն միջեւ սաստիկ դէպք կայ ռազմի.
Ամէնքն երկչոտ ու վարանոտ, ամեն բան հոն մէջ է վտանգի¹⁰:*

*Բնական կազմուածքիս բազում հատուածներն՝ իրարու ներհակ ելել են մարտի.
Ու կասկածոտ վախով վարանած ահա մատնուրէր են սրտադողի¹¹:*

*Մ. Խերանյանը, որն իր թարգմանությունում հավատարիմ է մնացել “Մատեանի”
հանգին բնորոշ գրեթե բոլոր առանձնահատկություններին, նշված հատվածում նույն-
պես պահպանել է ի հանգը.*

*Էությունս բազում մասերը՝ ներհակ իրար դէմ ելել են պատերազմի.
Կասկածանքների վախով վարանած՝ մատնվել եմ ես անհուն տազնապի¹²:*

*Սակայն այլ է Վ. Գևորգյանի թարգմանությունը. նա, ով “Մատեանն” ամբողջու-
թյամբ չափածո է թարգմանել, հրաժարվել է հիշյալ հատվածի հանգավոր ձևից.*

*Իմ իսկ էության մասերն համորեն, մեկնելու ներհակ,
Պատերազմում են անվերջ իրար դէմ.
Երկչոտությամբ ու տազնապով վարան՝
Վտանգի մէջ է այնտեղ ամեն ինչ¹³:*

*Մ. Աբեղյանը ԻԶ գլխի նշված հատվածի օրինաչափությունը համարել է “...հայերե-
նի չափին բնորոշ հնգավանկ անդամներով գրված լինելը”¹⁴: Սակայն հնգավանկ ան-*

⁹ Աշխարհաբար Նարեկ, աշխարհաբար վերածեց՝ Միսաք Գոչունյան, Կ. Պոլիս, 1902, էջ 127:

¹⁰ Նարեկ. Աղօթամատեան ս. Գրիգոր Նարեկացւոյ, արդի հայերէնի վերածեց Թորգոմ Էպիսկոպոս Գուշակյան, Գահիրէ, 1926, էջ 79:

¹¹ Նարեկ. Ողբերգութիւն Մ. Գրիգոր Նարեկացիի, աշխարհաբար վերածեց Գարեգին Էպիսկոպոս Տրապիզոնի, Կ. Պոլիս, 1926, էջ 122:

¹² Գրիգոր Նարեկացի. Մատյան ողբերգության, գրաբարից թարգմանեց Մկրտիչ Խերանյան, Երևան, 1960, էջ 111 (այսուհետև՝ Մ. Խերանյան և էջը):

¹³ Գրիգոր Նարեկացի. Մատյան ողբերգության. Տաղեր, թարգմանություն Վազգեն Գևորգյանի, Երևան, 1979, էջ 155–156 (այսուհետև՝ Վ. Գևորգյան և էջը):

¹⁴ Մ. Աբեղյան. Երկեր, հ. Գ, Երևան, 1968, էջ 615:

դամներով չափը որոշ տեղերում խախտվել է. ԻԶ գլխի Ե հանգով վերջացող հատվածի բոլոր տողերում վանկերի քանակը տատանվում է՝ 14-ից 20 վանկանի տողերի միջև: Կարելի է եզրակացնել, որ Նարեկացու նպատակը ոչ թե հավասար թվով վանկերից բաղկացած տողեր ստեղծելն էր, այլ՝ տողերի միահանգությունն ապահովելը: Ամենա-ուշագրավն այն է, որ նշված հատվածի բոլոր տողերն ավարտվում են յամբ-անա-պեստյան հնգավանկ բարդ ոտքով.

Պարտուցն ժխտեալ տաղանդացն՝ ճեպով մեծաւ ի տուժի,
Ես ապիկարս՝ մատնեալ անարժան գործովքս յիրաւի,
Վատնիչ արքունի գանձուց՝ կրկնադատ եւ անթափելի (345, տ. 21–23):

Հանգի պահպանումը գտնում ենք միայն Մ. Խերանյանի թարգմանությունում.

Դրամական պարտքն ուրանալով, ես վատս, հիրավի,
Գործովս անարժան մատնվել եմ վաղ տույժ ու տուգանքի.
Կրկնահանցագործ վատնիչս կորած՝ գանձին արքունի (Մ. Խերանյան, 109):

Իսպառ ուրացած պարտքը տաղանդի՝
Ես ապիկարս, գործերով անարգ,
Որպես արքունի գանձերի վատնիչ(Վ. Գևորգյան, 152):

Նարեկացին ոչ միայն հատվածներ է ստեղծել նույն հանգով, այլև հաճախ տվյալ գլխում փոխել է խոսքի եղանակը և ոճը, ինչպես Բան ԻԶ-ում՝ “... նոյն ինքն, որ գայս բան տպաւորեաց, ընդ երջանկացն պսակեցցի” (346, տ. 78): Այն մաղթողական բնույթ է ստացել, որտեղ հեղինակը դիմել է արտահայտության մեկ այլ հնարանքի, Գ. Ավետիքյանի խոսքերով ասած՝ “... ի բերան աղօթողացն դնէ աղարել վասն իւր”¹⁵: Նշված գլխի տողերը ոչ միայն ոճով են տարբերվում մնացածներից, այլև դրանք ամենակա-նոնավորներից են: Թերևս, այդ հատվածի՝ դժվարթարգմանելի լինելու համար այն չեն թարգմանել:

Հանգը ոչ միայն ապահովում է տողերի համահնչունությունը, արտահայտում հո-գեվիճակ, այլև “... հաճախ այն մեզ վերադարձնում է նախորդ տողին, ստիպում է հի-շել այն, հարկադրում է մի միտք ձևակերպող բոլոր տողերին միատեղ լինել”¹⁶: Այս-պես, “Մատենանի” ԼԹ գլուխը մեզ մտովի տանում է դեպի ԻԶ հատվածը, որը դարձյալ գրված է լայնաց երգերի նմանությամբ՝ “... գայս նմանութիւն աւաղականաց” (406, տ.

¹⁵ Գ. Աւետիքեան. Նարեկ աղօթից, համառօտ եւ զգուշաւոր լուծմամբք բացայայտեալ միանգամ եւ այժմ երկրորդ անգամ յաւելլուածով, Վենետիկ, 1827, էջ 125, ծնթ. 24:

¹⁶ Վ. Մայակոնովսկի. Ընտիր երկեր, հ. 2, Երևան, 1950, էջ 376:

26): ԼԹ գլխի 20–24, 27–35 տողերը վերջանում են նույն՝ ոյս հանգով, որը շատ քիչ է միջնադարում գործածվել:

Ինչպես նշվեց, հանգը նաև իմաստային զգալի դեր է կատարում: Բանաստեղծները ձգտում էին տողերի վերջում դնել և հանգավորել առավել կարևոր բառերը, որոնք կրկնվող հնչյունների շնորհիվ ավելի մեծ ուշադրություն էին գրավում¹⁷:

Որ ամաւթոյն դառն պատուհաս պահեալ կայ հիքոյս,
Կրճումն աստամանց եւ անկէտ լալումն՝ աչաց եղկերոյս,
Հայրական ցասումն անսպուժելի՝ դառնութեան որդոյս (406, տ. 27–29):

Հանգավոր բառերի միջոցով հեղինակը ոչ միայն հուզական ու ազդեցիկ է դարձրել խոսքը, այլև ընթերցողի ուշադրությունն է կենտրոնացրել դրանց վրա՝ հիշյալ դեպքում այդպես ընդգծելով նաև իրեն տրված բնորոշումները՝ «հիքոյս, եղկերոյս, որդոյս»:

Հանգը նույնությամբ են թարգմանել Մ. Խերանյանը և Վ. Գևորգյանը.

Ամոթի դառն պատուհասն է պահված հեգիս,
Կրճտումն աստամների և աչքերի լաց անվերջ՝ եղկելիիս,
Հայրական անսպասելի ցասում՝ ստահակիս (Մ. Խերանյան, 172):

Այն, որ պահված են հեգիս՝ ամոթի դաժան պատուհաս,
Ատամնակրճում ու անհատնում լաց՝ եղկերուս աչքին,
Անողորքելի հայրական ցասում՝ դառնացած որդուս (Վ. Գևորգյան, 238):

Նարեկացին դիմել է նաև ներքին հանգավորման.

Մանաւանդ զի դու լոյս ես եւ յոյս,
Եւ ես՝ խաւար եւ յիմար,
Դու՝ իսկութեամբ բարի, գովելի,
Եւ ես՝ համայնիւն չար, ապիկար (2Գ, 583, տ. 32–35):

2Գ գլխի 32–45 տողերի վերջին բառը նա հանգավորել է նրան նախորդող բառերից մեկի հետ՝ բացառությամբ 36 և 40–րդ տողերի.

Դու՝ տէր ստորիցս եւ երկնից (583, տ. 36),
Դու՝ ի վեր քան զկիրս երկրիս (583, տ. 40):

¹⁷ Է. Ջրբաշյան. նշվ. աշխ., էջ 320:

Մա այն հատվածներից է, որտեղ բանաստեղծը բնորոշումների միջոցով (“լոյս... յոյս, խաւար... յիմար, բարի... գովելի, չար... ապիկար, շնչոյս... հոգւոյս, բարձրեալ... գատեալ, տաժանաւոր... վտանգաւոր, անարգութեան... զարշուրթեան, մթութիւն... նենգութիւն”, 583, տ. 32–45) իրեն հակադրել է Աստծուն: Տողի ներսում հանգավորվել են Աստծուն ու իրեն տրված բնորոշումները, ինչից խախտվել է հնգավանկ անդամների չափը, քանի որ դժվար է պահպանել և՛ մեկը, և՛ մյուսը: Թարգմանչի համար ևս դժվար էր հավատարիմ մնալ և՛ հանգին, և՛ չափին:

Ինչպես նկատել է Է. Ջրբաշյանը, “... չափածոյի թարգմանության մեջ բնագրի տաղաչափության ճշգրիտ պահպանումը հաճախ ոչ միայն հնարավոր, այլև ցանկալի չէ, քանի որ կարող է չհամապատասխանել թարգմանվող լեզվի օրինաչափություններին և պատճառ դառնալ բովանդակության ավելի էական կողմերի կորստյան: Ընդհակառակը, շեղվելով բնագրի տաղաչափական ինչ-ինչ գծերից, տաղանդավոր թարգմանիչը կարող է շատ ավելի մերձենալ նրա ոգուն”¹⁸: Այդ պատճառով թարգմանիչները միայն որոշ տողերում են պահպանել ներքին հանգավորումը: Մակայն դրա փոխարեն ՁԳ գլխի վերոնշյալ տողերը ստեղծել են՝ հավատարիմ մնալով “Մատեանի” հնգավանկ անդամներով չափին, որից հատվածը չի կորցրել իր ուրույնը.

Մանավանդ որ դու լոյս ես ու հույս,
Իսկ ես խավար ու խենթ.
Դու ի բնէ բարի ու գովելի,
Իսկ ես՝ չար համակ ու ապիկար (Մ. Խերանյան, 359):

Մանավանդ չէ որ դու լոյս ես ու հույս,
Իսկ ես խավար եմ ու հիմարամիտ.
Դու՝ փառաբանված բարի իսկություն,
Ես՝ ամեն ինչով չար ու ապիկար (Վ. Գևորգյան, 502):

Նարեկացին դիմել է նաև այլ հանգերի՝ դերբայական եալ (ԲԳ, տ. 17–58), բայի սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակի առաջին դեմքի՝ ցայ (ԲԴ, տ. 2–29), կիրառությանը, որոնք թարգմանիչները վերստեղծել են աշխարհաբար համարժեքներով.

Յորժամ իցէ մարմինն մեղաւք գրաւեալ (ԲԳ, 332, տ. 17),
Երբ մեղքերով է տարված մարմինն ամբողջովին (Մ. Խերանյան, 94),

Երբ որ մարմինդ մեղքով է լափված (Վ. Գևորգյան, 133):

¹⁸ Նույն տեղում, էջ 315:

Թէ փառա՞ցդ վայելչութեան, յորմէ՞ գրկեցայ (ԻԴ, 335, տ. 2),

Թէ՞ վայելուչ փառքիդ որից գրկվեցի (Մ. Խերանյան, 98),

Փառքիդ վայելքի՞ն, որից գրկվեցի (Վ. Գևորգյան, 138):

Երբ հանգավորվում են համասեռ բառեր՝ բայր բայի հետ, գոյականը՝ գոյականի, միատեսակ արմատների կամ հոլովների ժամանակ և այլն, ապա այդպիսի հանգը թուլացնում է հետագա ողջ հակադրությունը¹⁹: Այդ պատճառով Նարեկացին ամենաբնորոշ բառը դնում է տողի վերջում և ինչ գնով էլ լինի դրա համար հանգ է գտնում. հեղինակի հանգավորումը միշտ անսովոր, բայց հնչեղ է լինում:

Նարեկացին ստեղծել է նաև նոր հանգավորում. ԲԵ (դ) հատվածը եզրափակել է բայերի անցյալ դերբայի ձևերով՝ հանգավորված առ հանգով: «Մատեանն» ունի միա-հանգ բազմաթիվ հատվածներ, սակայն նշված քառատողը, ԲԶ գլխի հետ միասին, այդ իմաստով ամենաուշագրավն է.

Եթէ լինիցի՞ խաւարասնունդս մթացելոյ ծագման առաւաւտ,
 Եթէ հասցէ՞ տեսանել զտագնապէալս մշտասատոյց յեղանակս
գարնանն մաւտ,
 Եթէ տեսի՞ ց՞ գցաւդ անձրեւոյն կանաչացուցանողն հոգւոց ինձ
արաւտ,
 Եթէ իցէ՞ երբէք նկատել զգագանաբեկ հերքելի ոչխարս վերստին
կամաց զթութեան քո հաւտ (342, տ. 81–84):

Այստեղ հեղինակը տողերը հանգավորել է ոչ թե բայերի միևնույն ժամանակային ձևի (գրկեցայ... հերքեցայ, ամաչեաց... պատկառեաց), միևնույն դերբայի (գրաւեալ... մեկուսացեալ) կամ նույն վերջածանցն ունեցող գոյականների (տխրութիւնս... ծանրութիւնս) կրկնությամբ, այլ բառերի չթեքված, ուղիղ ձևերի միջոցով: Տողերում հանգակապ բառերն են «առաւաւտ, արաւտ, հաւտ» գոյականները և «մաւտ» կապը²⁰:

Թարգմանիչները մասամբ են պահպանել այս հատվածի հանգավորումը.

*Մթնածիս վրա խավարասնունդ կծագի՞ արդոք պայծառ առավոտ.
 Եվ մշտասատոյց տագնապալս ես կհասցնէ՞ արդոք գարուն տեսնելու,
 Կտեսնէ՞ արդոք ճարակ ինձ համար հոգիները դալարեցնող ցողն*

¹⁹ Վ. Մ ա յ ա կ ո վ ս կ ի. նշվ. աշխ., էջ 378:

²⁰ Գ Ր ի գ ո թ Ն ա Ր Ե կ ա ց ի. Մատեան ողբերգութեան, էջ 1015, ծնթ. 15:

անձրևային.

Կլիինի՞, որ տեսնեմ գազանաբեկ մերժելի ոչխարս կրկին քո ամենագուրթ կամքի հոտը (Մ. Խերանյան, 105–106):

Խավարասունդ մթնածիս վրա

Կծագի՞ արդյոք պայծառ առավոտ.

Տազնապահարս հավերժասառույց

Կարո՞ղ եմ հասնեմ գարնանամուտին.

Կտեսնե՞մ առատ ցողն անձրևային՝

Հոգուս արոտը կանաչագարդող,

Եվ գազանակուր ոչխարս, մերժված

Կտեսնե՞մ արդյոք նորից գթառատ կամքիդ հոտի մեջ

(Վ. Գևորգյան, 148):

ԻԵ գլխի նշված հատվածում հանգը նաև ընգծել է Նարեկացու ստեղծած բանաստեղծական տան սահմանը, քանի որ իմաստով և ռիթմով միմյանց հետ սերտորեն կապված տողերը միացել ու կազմել են ավելի մեծ ռիթմական և արտասանական միավոր:

“Մատեանի” որոշ հատվածներ աչքի են ընկնում նաև բազմահանգությամբ, ինչպես՝ ԺԳ գլուխը: Հեղինակն այս գլխում դիմել է տարբեր թիւնս (տ. 48–51), մունս (տ. 53–55), իս (տ. 56–59), ոյս (տ. 61–63), հանգերի կիրառության.

Փարատեա՛, ամենապարզեւ, զամաւթական տխրութիւնս

(291, տ. 53),

Փարատի՛ր, ամենապարզն՛, ամոթալի տխրություններս

(Մ. Խերանյան, 49),

Փարատի՛ր իսպառ, ամենապարզն՛,

Տխրությունն իմ այս նշավակելի (Վ. Գևորգյան, 72):

Վ. Գևորգյանը թեև նույնությամբ է ստեղծել բնագրի հանգը, բայց այն նախադաս կամ միջադաս կիրառություն է ստացել: Նա նաև տողի վերջում է դրել կոչականները, որոնք նշված հատվածում Աստծուն են տրվում՝ թերևս, ջանալով առավել շեշտված դրանք ներկայացնել.

Կնքեա՛, կեցուցիչ, զկորուսչին ընթացմունս (291, տ. 53),

Կասեցրո՛ւ, կեցուցի՛չ, ընթացքի կորուսչի (Մ. Խերանյան, 49),

Խափանի՛ր, փրկի՛չ, հարձակումները կորուստ նյութողի (Վ. Գևորգյան, 72):

Պարփակեա՛ք քո ձեռամբդ զառաստաղ տաճարիս (291, տ. 57),

Պարփակիր քո ձեռքով առաստաղը տաճարիս (Մ. Խերանյան, 49),

Պարփակի՛ր քո ձեռքովդ առաստաղն իմ տան (Վ. Գևորգյան, 72):

Պահեսցե՛ս քո կամաւքդ զտառապեալ անձն ոգոյս (291, տ. 63),

Պահպանիր քո կամքով տառապած հոգիս (Մ. Խերանյան, 49),

Կամքովդ պահպանի՛ր հոգիս տառապյալ (Վ. Գևորգյան, 73):

Այսպիսով, «Մատեանի» հանգին բնորոշ առանձնահատկությունները կարևոր էր արտահայտել նաև թարգմանություններում, քանի որ Նարեկացին հանգին դիմել էր գիտակցաբար՝ ինչպես նոր և ինքնատիպ ձևեր ստեղծելու, այնպես էլ բովանդակային կարևոր հատվածների վրա ընթերցողի ուշադրությունը սևեռելու համար: Եվ թարգմանիչները «Մատեանի» իրենց աշխարհաբար թարգմանություններում կարողացել են պահպանել բնագրի՝ այդ հանգավոր հատվածների առանձնահատկությունները:

Սակայն «Մատեանի» նույնիսկ այն հատվածները, որոնք հեղինակը հանգավոր չի ներկայացրել, նույնպես հնչեղ են ստացվել, իսկ «... բանաստեղծություններն ինքնին պետք է գրեթե հանճարեղ լինեն, որպեսզի հնչեն առանց հանգի»²¹: Հետևաբար, էական չէ, թե Նարեկացին հանգավոր է ներկայացրել իր հույզերը, թե անհանգ. նա իր հանճարով կարողացել է բազմազան միջոցներով ամեն միտք, ամեն տող, ամեն բառ դարձնել հնչեղ և իմաստալից:

²¹ Ե. Չաբենց. Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, 1967, էջ 440–441:

ПРОЯВЛЕНИЯ РИФМЫ В «КНИГЕ СКОРБНЫХ ПЕСНОПЕНИЙ» ГРИГОРА НАРЕКАЦИ И В ПЕРЕВОДАХ НА СОВРЕМЕННЫЙ АРМЯНСКИЙ ЯЗЫК

АНУШ АПРЕСЯН

Резюме

Григор Нарекаци построил свою «Книгу скорбных песнопений», обращаясь и к уже существующим в то время в армянской поэзии разновидностям рифмы, и создавая их новые и самобытные формы. Однако тот факт, что «Книга скорбных песнопений» имеет глубокое и своеобразное звучание на древнеармянском языке, еще не являлся гарантией того, что и на современном армянском она могла произвести впечатление. Переводчики на современный армянский пытались сохранить особенности, присущие рифме «Книге скорбных песнопений». По этой причине все те части, которые автор рифмовал по настроению души, они переводили, оставаясь верными форме оригинала. Остальные части создавали по своему внутреннему ощущению, не считая, что перевод является слепым подражанием стихосложению, рифме и ритму оригинала, благодаря чему их переводы «Книги скорбных песнопений» на современный армянский язык получились благозвучными.

THE MANIFESTATIONS OF RHYME IN “BOOK OF LAMENTATION” BY GRIGOR NAREKATSI AND ITS TRANSLATIONS INTO MODERN ARMENIAN LANGUAGE

ANUSH APRESYAN

Summary

Grigor Narekatsi structured his “Book of Lamentation” using either diverse forms of rhyme already existing in the Armenian poetry of that time, or creating their new and original forms. Nevertheless, the fact that “Book of Lamentation” has a profound and peculiar sounding in Old Armenian language did not give any guarantee that translated into Modern Armenian it may leave an impression. Translators into Modern Armenian tried to preserve peculiarities proper to the rhyme of “Book of Lamentation”. So, they translated all the parts which the author rhymed according to his spiritual mood, as “Book of Lamentation” is mainly written without rhyme, remaining faithful to the original form. They created the other parts according to their internal sensation, not considering that a translation must be the blind imitation of the versification, rhyme and rhythm of the original. Thanks to that, their translations of “Book of Lamentation” into Modern Armenian have a harmonious sounding.